ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ

Նկ.1. Մխիթար Հերացին և Ներսես Շնորհալի կաթողիկոսը:

12-րդ դարում ապրած զարմանալի մարդն այս իր մեջ միավորել է բազում տաղանդներ, նա գիտնական էր, բնագետ ու փիլիսոփա, համարվում է հայկական դասական բժշկության հիմնադիրը: Տիրապետել է հունարեն, պարսկերեն և արաբերեն լեզուներին: Գրի է առել բժշկական բազմաթիվ գիքեր, որոնցից միայն մասունքներ են մեզ հասել, դրանք այժմ պահվում են Մատենադարանում: Ամբողջությամբ պահպանվել է նրա «Ջերմանց մխիթարություն» գիրքը:

Այն գրվել է 1184 թվականին Գրիգոր կաթողիկոսի հորդորով. «Անվանեցաք «Ջերմանց մխիթարություն», զի սա մխիթարէ զբժիշկն ուսամբ, իսկ զհիվանդն՝ առողջությամբ»: Գիրքը շատ դարեր ծառայել է հայ բժշկությանը: Հերացու մասին շատ քիչ կենսագրական տեղեկություններ ունենք: Իր գրքից հայտնի է, որ ծնվել է մոտավորապես 1120 թվականին Պարսկաստանի Խոյ քաղաքում: Հիմնական կրթությունն ստացել է Կիլիկյան Հայաստանում: Նա ուսումնասիրել է Հիպոկրատի, Ավիցեննայի աշխատությունները,հետազոտություններ է կատարել մարդակազմության, ախտաբանության, ակնաբուժության, դեղագիտության ու բնագիտության ոլորտներում: Բժշկագիտության մեջ Հերացին շեշտադրել է փորձի կարևոր դերը և հեռու է մնացել իր ժամանակաշրջանին բնորոշ կրոնամիստիկական պատկերացումներից: Նա գտնում էր, որ մարդու հոգին հենց նրա մարմինն է և վերջինիս մահվամբ վերջանում է ամեն ինչ:

«Ջերմանց մխիթարություն» աշխատությունը առաջին անգամ հրատարակվել է Վենետիկում 1832 թ. իսկ 1955-ին հրատարակվել է Երևանում: 1908 թ. «Ջերմանց մխիթարություն»-ը թարգմանվել է գերմաներեն, հետագայում՝ նաև այլ լեզուներով:

Այսօր Երևանի պետական բժշկական համալսարանը կոչվում է Մխիթար Հերացու անունով, ՀՀ-ում կան նրա անվամբ փողոցներ, նաև մեդալ: